Սրբազան Պատրիարք Օրմանեանի մի նոր շրջաբերականը։

Լումալում արդէն առիթ ենք ունեցել շեշտելու Սրբազան Օրմանեանի հայրական հոգացողութիւնը թէ հայ որբերի դպրոցների ու թէ ուսուցիչ-ուսուցչուհիների վերաբերմամբ. այս անգամ նա մի նոր շրջաբերականով Կ. Պոլսի պատրիարքը դիմելով թէ Պոլսի ու թէ գաւառների հայ ուսուցիչներին, դաստիարակներին և վարժուհիներին, լայտնում է նրանց պաշտօնապէս մի նոր ու օգտակար կարգադրութեան մասին։

Սրբազան պատրիարքի քաջալերութեամբ և սատարութեամբ Պոլսի հայոց Պատրիարքարանի ուսումնական խորհուրդը կազմեց «կարօտ ուսուցչաց օգնութեան սնդուկը», օժանդակելու՝ կարօտ ուսուցիչներին ու վարժուհիներին հիւանդութիւնների և այլ կարևոր դէպքերում, որ արդէն սկսել է իւր գործունէութիւնը։ Ուրեմն այսուհետև տաճկահայոց կարօտ ուսուցիչներն ու վարժուհիները ստիպուած չեն լինի օտարներին ձեռք մեկնել կամ տոկոսով պարտք վերցնել. կալ մի հաստատութիւն, որ նրանք առանց ամաչելու կարող են դիմել և դրամական օժանդակութիւն ստանալ։

Սակայն Սրբազան Պատրիարքը չբաւականանալով այդ «օգնութեան սնտուկով», ուսումնական խորհրդի և այլ լանձնաժողովների խորհրդակցութեամբ՝ մտածում է այլ կերպ ևս ապահովել հայ մանկան դաստիարակների կեանքը և առաջարկում է նրանց ապահովել իրենց կեանքը։ Ուսումնական խորհուրդն ընդհանուր կերպով գործածուած ապահովագրութեանց դժուարութիւններն ի նկատի ունենալով, աշխատում է աւելի դիւրին պայմաններ ստեղծել ուսուցիչների համար. բանակցում է բոլոր ապահովագրական ընկերութիւնների վարչութիւնների հետ՝ մէկ կողմից ուսուցիչների վճարումները հեշտացնելու և միւս կողմից լրգուտ «օգնութեան սնտուկին» նպաստ ստանալու լուսով։ Այդ բանակցութիւնները և խորհրդածութիւնները լաջող հետևանք են ունենում և պատրիարքարանը պայմանաւորում է Փարիզի «Իւնիօն» ապահովագրական ընկերութեան հետ։ Այդ պայմանի հիման վրայ «Իւնիօն» ապահովագրական ընկերութեան մօտ ապահովագրուող հայ ուսուցիչներն ու վարժուհիները, դաստիարակներն ու դաստիարակչուհիները կարող են իրենց տարեվճարներն ամէն

ամիս տալ. եթէ մի որ և է պատճառով վճարումներն ընդ-
հատուին, ամիսներ կամ տարիներ անցնելուց յետոյ դրանք
առանց կորուստի կարող են շարունակել իւրեանց վճարումները,
հարկաւ ընդհատուած ժամանակի վճարներն ևս փոքրիկ տո-
կոսով տալով. ապահովագրութեան դումարը կարելի է մինչև
1000 ֆրանկի իջեցնել. «Իւնիօն» ընկերութիւնն այժմ իսկ
«որոշ և նշանաւոր դումար մը պիտի նուիրէ ուսուցչաց օգ-
նութեան մասուկին ու երբ տարեվճարները 100 ոսկու դու-
մարը անցնին, իւրաքանչիւր առաջին տարեվճարներէն ալ
բաժին մը դարձեալ նոյն օգնութեան մասուկի պիտի թողու
իբր նպաստ, որով այս ամէնն ալ դարձեալ միևնոյն ուսուց-
չական մարմնոյն օգտին և օգնութեան լատկացեալ իրական
արդիւնքներ պիտի կազմեն». Իւրեանց կեանքն ապահովել
ցանկացող ուսուցիչների առաջարկութիւնները ուսումնական
խորհրդի միջոցով պէտք է յայտնուին ընկերութեան վարչու-
թեանը. «Այդ կերպով ուսուցիչք ալ վստահութիւն պիտի
ստանան, որ ուսումն. խորհրդոյ միջնորդութեամբ իրենց
իրաւունքներն և դիւրութիւնները օրինաւորապէս պիտի
պաշտպանուին»։

Ցաճկանալ ուսուցչական դասակարգին մնում է շնորհա-
կալութեամբ ընդունել այս պաշտօնական առաջարկը և իրա-
գործել։ Ո՛րչափ բարոյական մխիթարութիւն այժմեան նեղ
օրերին։

ԲԸԻՉ